248

Մ. ՏԱՐԲԱԽՉԵԱՆ

589

ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ

ՄԵՂԵԴԻՆԵՐ

(Նադսոնից, Լերմ'ոնտովից, Հայնէից եւ ուրիշներից)

8
Ր-33

պարան ,,ՇԻՐԱԿ'' Ալէքսանդրապօլ
1908
(66)

Մ. ՏԵՐՈՒԽՉԵԱՆ

13 MAY 2005
2 NOV 2005
8
P-33
826
1002
6165

ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ

ՄԵՂԵԴԻՆԵՐ

(Նադսոնից, Լերմոնտովից, Հայնէից եւ ուրիշներից)

ՀԱՍԽՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Публичная Библиотека С.С.Р.А
7/XI. 1922
имени Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Տպարան ,,ՇԻՐԱԿ‘‘ Ալէքսանդրապօլ
1908

(66)

17 APR 2013

148

ՆԱԴՍՈՆԻՑ

(I-XIII)

ՅԱՌԱՋ

Յառաջ, միշտ յառաջ, թող. միշտ ու հառաջ,
Երբէք չընկճուիս փոթորկի առաջ,
Կուիր հեռաւոր դու լուսոյ համար,
Որը փայլում է գիշերը խաւար։
Քանի ոյժ ունես զօրեղ թեներում,
Կուիր, աշխատիր, դու միշտ անդադրում,
Թող վհատութիւն չտիրէ սրտիդ,
Յուսոյ ժպիտը թող փայլէ դէմքիդ։
Միշտ բարձրացրու քո ձայնն աղնիւ,
Ու միշտ պաշտպանիր գիտութիւն պատիւ,
Թող քեզ նախատեն միշտ արհամարեն,
Թող չար ամբոխը դառն խօսքերով
Քեզ միշտ կշտամբէ, քեզ վիրաւորէ,
Գնա, դու յառաջ անվեհեր հոգով,
Յառաջ, քո փշեայ նեղ ճանապարհով,
Կրիր քո մատաղ կրծքում համարձակ
Կեանքի դոռ խարդեր բաջի նմանակ,
Ձայն տուր խաւարում խոր քնածներին,
Հասիր օգնութեան կարօտեալներին,
Եւ ճշմարտութեան խօսքը անգադար,
Կրկնիր մեղանչող ամբոխի համար։

*
* *

Ընկեր իմ, եղբայր վաստակած մարմնով,
Ով կուզէ լինիս, չվհատիս հոգով,
Թող շաբը տիրէ երկրիս երեսին,
Ցօղւած արցունքով մարդոց անհամար,
Թող միշտ անարգւած լինի սուրբ իդէալ,
Եւ թող միշտ թափւի արիւն անարատ,
Կրգայ ժամանակ կընդնի և Վասալ,
Նորից սուրբ սէրը կլցնէ աշխարհ։
Ո՛չ փշէ պսակով և ո՛չ կապանքով,
Եւ ոչ կարմիր խաչ յոգնած ուսերին—
Նա աշխարհ կրգայ ուժով և փառքով,
Լուսոյ լապտերով բախտը միշտ ձեռին։
Չի լինի այլևս աշխարհում չարիք,
Եւ ոչ սպանող շատ ու շատ կարիք,
Եւ ոչ անարգւած անբաւ գերիներ,
Ո՛չ սուր, ո՛չ արիւն. ո՛չ անարգ սիւներ։
Ընկեր պատւական, այս ս. արշալոյս
Ցնորք չէ միայն և ոչ դատարկ յոյս,
Չարը, տես, կրկին տիրում է աշխարհ՝
Ամեն կողմ պատում գիշերը խաւար։
Տանջանքից յոգնած, արեամբ շաղախւած,
Դադրում է երկիր կուով տանջւած
Դէպի վեր միայն, դէպի ազնիւ սէր,
Դարձնում է կրկին աղերսող աչեր։

ՊՕԷՏ

Թող երգդ հնչէ՝ հրով ու բոցով,
Այրէ հոգիներ արդար արցունքով.
Թող գտնեն հրաւէր, ազնիւ ցանկութիւն,
Եւ ազնիւ սէր, գութ դէպ՝ առ Հայրենիք
Նորա ամեն ձայն թող յառաջ կոչէ,
Կուով ճնշւածին՝ նոր յոյս ներշնչէ,
Թող փառքով պսակէ կուում ընկածին,
Ծաղրէ անարգէ, վախկոտ փախչողին,
Թող մեզ վարժեցնէ կուել անդադար.
Կուել ճշմարտի և լուսոյ համար,
Կուել խաւարի, տգիտութեան դէմ,
Ամոքէ վշտեր սև բախտին դժխեմ—

Կեցնենք քո առաջ մենք այն ժամանակ.
Սիրով կանանենք մեր «պօէտ» միակ։

Թող երգդ հնչէ, որպէս քշքշուն,
Վճիտ, սառնորակ առւին գալարուն.
Թող նրա մէջ եռան ազնիւ ձգտումներ,
Ոյժ ու տենչանքներ, միշտ վառ երազներ,
Թող քո երգերի ձայնով շունչ առած՝
Մտնենք գիւթական երկիր սրբազան,—
Ուր չկայ արցունք, նեղութիւն ու վիշտ,
Կայ գեղեցկութիւն, սէր, լիրզ ու հանգիստ,

Թող զարմանանք առանց մտքերի,
Նորից նիրուենք սուրբ ցնորքների,—
Եւ մենք կգովենք այն ժամ բո վաստակ,
Սիրով կանուանենք մեր «պօէտ» մէակ։

ԶԱՌԱՆՑԱՆՔ

Մեռաւ պօէտը... Սրտագին ձայներ,
Չեն շարժում այլեւ Նրբազգաց սրտեր
Ընկան անկենդան թեւեր յոգնաջան,
Որ հնչեցնում էին տաւիղ բաղդրաձայն։
Մեռաւ պօէտը... Անհետ թոռմեցան,
Հոտանոյշ ձայներ մատաղ պսակի,
Եւ սառն ու այրող ամպեր տխրութեան,
Մռայլում են անշարժ դէմքը մեռեալի։
Գիտէիր Նրան։ Նա ազնիւ հոգով.
Աշխարհի միջին փառք չէր փափագում,
Նա իւր երգերով, խոր տպիտութեան,
Եւ խոր խաւարի դէմ էր մարտնչում,
Իւր տանջած եղբօր ցաւով տանջւում։
Իսկ ինքը դաժան, խորթ բախտի զաւակ,
Կրում էր վաղուց ցաւեր դժնդակ.
Միշտ վիրաւորւած, հիւանդ ստորացած,
Տանջւում էր յաւէտ, սիրում ցնորած,
Անկեղծ էր երգում... Երգերի փայլով
Նա չէր փափագում մարդիկ գրաւել.
Եթէ երգերը թոյն էին շնչում
Նոյն այդ իսկ թոյնից էր նա վարակւում,
Եւ եթէ երբեմն նորա վառ երգեր
Հնչում էին վիշտ. տանջանքներ անյոյս,
Մաշում է՛ն Նրան այդ նոյն տանջանքներ
Փակելով առ միշտ նորա արշալոյս։

*
* *

Մեռաւ իմ մուսան... Մի կարճ ժամանակ
Լուսաւորեց նա օրերս մենակ։
Շիջաւ կրակը, ծաղկունք թառամեցան,
Խաւարաշէին գիշեր, որպէս գերեզման...
Ի զուր վշտամաշ, խռոված սրտում,
Բուժիչ ամոքիչ ձայներ եմ փնտրում։
Թոռմած է, փշրած իմ մտաց պսակ,
Կուլում եմ աներգ, աներգ մարտնչում...
Բայց կար ժամանակ. ո՞րքան հրաշքներ
Կատարւում էին իմ այս սենեակում,
Կուզէի—ահա վառ երկնակամար,
Փայլում էր գլխիս վառ ճաճանչներով,
Շուրջս տարածւում լճակն արծաթի,
Փայլում պալատներ ճոխ կամարներով,
Եւ գրանիտեայ սառցապատ սարեր,
Ծրարում ամպերում իրանց կատարներ.
Մենակ եմ այժմ... իմ խղճուկ տնակ,
Դատարկ ու մենակ աչքիս է նայում,
Եւ խաւար գիշեր, որպէս սեւ թռչնակ,
Անգոր թեւերով պատուհանս ծեծում....
Շքեղ պալատներ ցած գլորւեցան։
Բարձրաբերձ լեռներ յուռ փոշիացան.
Վշտից ու ցաւից սիրտս է կտրատւում,
Անզոր արցունքներ աչքս ողողում....
Մեռաւ իմ մուսան... Մի կարճ ժամանակ...

ԽԱՒԱՐՈՒՄ

Կար մի ժամանակ,—մենք աշխարհ մտանք,
Զօրեղ հաւատաւոր սուրբ գաղափարով.
Մեր մտաց միտքը չէին խռովում,
Ոչ չար խորհուրդներ և ոչ կասկածանք։
Մանկական հոգով հաւատում էինք,
Բախտին, գիտութեան, մարդկանց, ճշմարտին,
Անվախ, համարձակ դիմաւորում էինք
Ամեն տեսակի սև դժբախտութեան,
Մեր ս. խորհուրդն էր այս կեանքում դժւար,
Ապրել, աշխատել միշտ այլոց համար։
Մեր բոլոր փափագ, իղձեր կաթոգին
Տալ խորհուրդ այժմէն մեր այս նեղ կեանքին։
Մենք մտածում էինք—մօտ է ժամանակ,
Երբ լոյս կսփռենք մեր շուրջն անքանակ,
Եւ խաւար մտքեր ամուր շղթայած,
Մենք կխորտակենք, նոր հոգի առած,
Երբ ամենուրեք այս երկրի վերայ,
Որպէս հրաշագան լուսաւորութիւն,
Կփայլէ պատիւ և ազատութիւն,
Սուրբ ճշմարտութիւն, բարձր գիտութիւն
Աշխատանք ազնիւ, վսեմ, սրբասուն։
Անվախ աներկիւղ այսպէս կեանք մտանք,
Ամոքելու վիշտ, կրելու զրկանք,
Եւ դանդաղ քայլով, բայց եռանդագին

Հասանք ի վերջոյ մեր ճամփու ծայրին.
Սկզբից և եմ միշտ ազնիւ կերպով
Յառաջ ընթացանք մեր ընտրած շաւղով,
Մեր ականջներում հնչում էր միշտ, յար
«Յառաջ, աշխարհի և մարդկանց համար»։
Բայց այդ օրերը շուտով անցկացան,
Կեանքն անցնում է առաջւայ կարգով...
Մոռացանք անցեալ, մեր ուխտ սրբազան,
Այժմ ապրում ենք մի ուրիշ կեանքով
Որպէս երազներ անցան, գնացին,
Վառ ցանկութիւններ, իղձեր կաթոգին,
Մեզ համար այժմ օտար են օտար
Սուրբ գաղափարներ, բարիք անհամար,
Աշխարհ ենք մտնում, առանց իդէալի,
Առանց ուրիշին օգնել ցանկալու,
Մենք դառն ծաղրով, առանց գիտնալու
Ծաղրում անարգում մտքեր պաշտելի,
Զգացմունքները՝ ցնորք համարում—,
Մեր կրծքում կասկածի դժոխք ենք մնում.
Խլելով գեղեցկից ոսկեղէն պսակ,
Զարդարում նրանով կեանքն անառակ.
Եւ ով դեռ այսօր արի է հոգով
Պատւում ենք նրան մեր անարգանքով.
Այսպէս ենք ապրում, յենւած սրբութեան,
Մեր կեղտոտ, յամառ ձեռքով մեղսական։
Թող զարթնեն նորա, որոնց հոգու մէջ

Դեռ վառ է ազնիւ բարի ցանկութիւն,
Ով չէ խլացրել իդէալներ անշէջ.
Թող առաջ գնան գիտութեան լոյսին,
Կռւելով անվերջ հետ խոր խաւարին,
Որպէսզի լուսոյ սրբազան կրակ,
Այս երկրիս վերայ փայլէ շարունակ։

ՇՈՒՐՋՍ ՊԱՏԵԼ Է...

Շուրջս պատել է խաւարը մթին,
Թանձր մշուշով պատած է այգին,
Ցասմիկի կապոյտ հոտաւէտ թփեր
Նիհրում են անուշ, չեն խաղում հովեր,
Լճակի վերայ կայնին է նիրհում
Կապոյտ երկնքում վառ աստղեր փայլում,
Ննջիր, մոռացած դու քո չար բախտով.
Ննջիր, դու յոգնած, վաստակած մարմնով.
Ննջիր, տանջանքով ճնշուած, տանջուած,
Հարաչար կռւով վշտամաշ, ցաւած,
Թող կասկածների թոյնը չարալից
Կորչին քո տխուր, ցաւատանջ սրտից,
Եւ ուրախ, պայծառ նոր երազանքներ,
Թող քեզ պաշարեն, քեզ մխիթարեն։
Ննջիր, որ վաղը նոր հոգի առած,
Կռւիս կեանքի հետ խաւարով պատած,
Որ դաժան կռւում նոր ոյժ ստանաս,
Եւ որ չնկճես փոթորկի առաջ.
Որ քո նաւակը ամուր թևերով
Ուղղել կարենաս այս կեանքի ծովով
Այնտեղ, ուր պայծառ, փայլուն արշալոյս
Պատել է հազիւ երկիրը անյոյս,

Ուր շուտով մտքեր փայլուն լուսաւոր,
Կփայլէ արդէն վառ ճառանչներով,
Ուր արդարութեան արև փառաւոր
Կծագէ յաւէտ նոր արշալոյսով։

* * *

Օ՜, եթէ այնտեղ, հանդերձեալ կեանքում,
Կայ մի գեղեցիկ, սրբազան աշխարհ,
Ուր չկայ նախանձ, չարիք անհամար,
Ուր անդորրութիւն՝ միշտ թագաւորում,
Ուր կասկածները միտք չեն խռովում,
Եւ ոչ նենգ ցաւեր կրծքերը մաշում,
Լսիր իմ աղերս, ով իմ արարիչ,
Կանչիր ինձ այնտեղ, այս նեխուած ճահճից:

Նեղ է ինձ համար այս նեխուած աշխարհ,
Իւր կեղծ ու պատիր պլսպլսի փայլով,
Սուտ հառաչողին—հարազատ եղբայր
Պատրաստ է սպանել սեփհական ձեռով,
Վեհ զգացմունքներ—սէր ճշմարտութիւն,
Եւ ազատութիւն, մտածեն խոր քուն,
Այստեղ զզուելի շուկայի աստուած
Իւր սեղանները է վաղուց տարածած:

Հոգիս տածում է այլ զգացմունքներ.
Նա խաղաղութիւն, սէր է սպասում,
Զարատանց կռիւ, ծածուկ կասկածներ,
Մաշում են նրան և թունաւորում:
Իզո՜ւր, իզո՜ւր է նա լոյս աղերսում
Եւ մարդկանց համար իզո՜ւր է տանջւում:
Թանձր խաւարը անյոյս, մթագին,
Պատել է արդէն երկրիս երեսին:

Խեղդւած խաւարի և արեան միջին,
Տգէտ ամբոխի արժանի որդին,
Կորցրած դրախտի դուռը. աւա՜ղ,
Նայում է մեղսոտ դէմքով քմծիծաղ:
Եւ ում կանչում են վսեմ ձգտումներ
Դէպի հոգևոր վեհ գեղեցկութիւն,
Հասցնում է նրան միշտ անարգանքներ
Եւ առաջնորդում դէպի անարգ սիւն:

ԿԵԱՆՔ

Ամեն մի վայրկեան փոխելով պատկեր,
Քմհաճ զերթի տպայ, թափանց զերթի ամպեր,
Եռում է կեանքը դատարկ ալմուկով.
Ստորին ծպրելուն մեծը խառնելով։
Ինչ խառն ձայներ, էնչ պէս պէս պատկեր,
Այստեղ գուրգուրանք, այնտեղ սուր սուսեր.
Հնչում է այստեղ միմոսի զանգակ,
Այնտեղ մարդարէն տնքում խաչի տակ։
Որտեղ արևն է անգէ և ստեր,
Ուր արցունք, աղօտ, անդ հառաչանքներ
Զբաւորութեան։ Երեկ պատերազմ
Այսօր նոյն տեղում ծպրիկներ կան կազմ։
Ահա մարգարիտ. կոխուած ամբոխից,
Հիւթաւէտ պտուղ չորացած որթից,
Երեկւայ հերոս փառաց արժանի,
Այսօր անարգուած, վախկոտ, անարի։
Ահա մեր կեանքը. վայրկեան նրա օրէնք,
Եւ չկայ մէկը մարդկանցից գիտուն,
Որը ամբոխին պարզէր նրա շարժում,
Որը հասկանար նրա գաղտնիքներ։
Մէկ նա տխուր է մէկ ուրախ, զարթ,
Երբեմն փայլուն, երբեմն խաւար,
Կեանքը հրեշտակ է և հարբած սատան
Կեանքը նեղ բանդ է և արձակ ովկեան։

ԱՐՇԱԼՈՅՍԻՆ

Վառ վերջալոյսով փայլում է երկին,
Պայծառ գետակը խաղում մէջ կրակին,
Պայծառ գոյներով շրեղ զարդարուն,
Կախուած են ամպեր հեռու բարձրունքում։
Տեղ տեղ փայլում են աղօտ ճաճանչով,
Փոքրիկ աստղիկներ անհուն ժպիտով.
Լուսաւոր անտառ՝ լուռ ու մունջ նիրհում,
Խաղաղ ու հանգիստ արտերը ննջում։
Քեզ համար միայն սիրտ իմ վշտալից,
Զկայ քնքշութիւն և կեանք բերկրալից։
Ի՞նչն է վրդովում անցեալդ տխուր,
Թէ ջարդուած յոյսեր, տանջանքներ մրմուռ
Մաշում են արդեօք անվերջ կասկածներ,
Թէ չես հաւատում մարդկանց ու բախտին,
Թէ վառ ցնորքներ և անշէջ կրքեր
Տիրել են արդէն քեզ ամբողջովին,
Թէ բախտի կուռում ոյժերդ սպառած,
Դադրել ես արդէն, տխուր, վհատած,
Եւ ջարդուած յուսով մահ ես սպասում,
Փոքրհոգի կրծքով անվերջ սրտմտում։
Դէհ, արիացիր սիրտ իմ վշտահար,
Ի զուր չի անցնի կռիւն այս դժուար,
Նոր արշալոյսով կրոցավառուի
Մի նոր ժամանակ լուսաւոր մտքի,
Սուրբ արդարութեան, խղճի ճշմարտի։

1002
6165
Հ. Ս. Ս. Հ. Ա. Պետական Գրադարան
7/XI-1922
Ասատուրյան Գրադարան
Ա. ՍԱՍԱՆԻԿՅԱՆԻ ԱՆՎ.

*
* *

Հազիւ սենեակում մենակ եմ մնում,
Կեանքս մահուան հետ կռիւ է մղում,
Եւ ամէն անգամ տրտում է հոգիս,
Նոցա մուտցած վէճը լսելիս,
Եւ չի իմանում հոգիս վրդովուած,
Ո՞ւմ ձայնին լսել, ում լինել յարգած,
Դժուար է դժուար կեանքից բաժանուել,
Բայց և դիւրին չէ աշխատում տպրել։
Կեանքը ասում է—«Դու երիտասարդ,
Հոգով միշտ արի. ինչպէս ուրիշներ,
Կարող ես տանել նեղութիւն և դարդ,
Եթէ սիրել ես քո հէր եղբայրներ.
Զլինի՞ դու լացիր, որպէս դերասան.
Կամ քո վառ խօսքեր, ով դու ճարտասան,
Զէին ջերմ սրտի արտայայտութիւն,
Ոչ սիրուց բղխած, այլ դատարկ հնչիւն»։
Հազիւ թէ կեանքը յաղթել է սկսում.
Երբ դաժան մահը վրայ է բերում,
Անողորմ մահը իւր երգն է երգում,
Որին ակամայ ականջ եմ դնում.
—Ո՛չ, դու սիրելիս, անվախ համարձակ,
Սիրով տոգորուած աղնիւ յոյսերով,
Մտար կեանքի մէջ գործել ուխտերով
Բայց 'ի զուր անցաւ քո սուրբ նպատակ։

Ի զուր դու նոցա սէր քարոզեցիր,
Նոքա քո ձայնին լսել չուզեցին,
Եւ դու յոգնեցիր... Կեանքի գոռ շուկան
Ծածկեց քո ձայնը ընդ միշտ յաւիտեան,
Ե'կ շուտով գիրկս, դու իմ սիրեկան,
Այստեղ կգտնես բեզ հանգիստ կայան,
Եւ Թող ինքնասէր կոյր փարիսեցիք,
Թափեն քո դլխին իրանց նախատինք։

* * *

Թո՛ղ արցունք ցայտեն քո սեգ սև աչեր
Թո՛ղ կրծքումդ սնեն անթիւ կասկածներ,
Երբէք չսպասես դու կարեկցութիւն,
Պահելով սրտումդ ամեն նեղութիւն,
Կուլիր դու մենակ քո չար բախտի հետ,
Թո՛ղ ոյժդ պակսի չգայ կրկին յետ,
Օ՜ն, ուրախացիր, այդ ճանապարհով,
Մեզանից առաջ, կհասնես փութով
Սառը գերեզման՝ կեանքի վերջին կէտ։

ԼԵՐՄՈՆՏՈՎԻՑ

(I—V)

Ն Ա Ւ Ա Կ

Փայլում է ճերմակ նաւակը մենակ,
Ծովի մշուշում փայլուն, կապուտակ,
Ի՞նչ է որոնում հեռու աշխարհում,
Ի՞նչ է կորցրել հայրենի երկրում։
Խաղում են ալիք, հողմն է հառաչում,
Կայմերն ծռւում են և միշտ տատանւում,
Աւա՜ղ, նա երբէք բախտ չի որոնում,
Բայց և բախտից էլ նա չի խուսափում։
Փայլում է տակին հոսանք կապուտակ,
Նայում՝ վերևից պայծառ արեգակ,
Բայց նա խռովայոյզ մրրիկ է խնդրում,
Կարծես մրրիկն է հանգիստ պարգևում։

*
* *

Տխուր ու տրտում անցնում են օրեր,
Զունիմ ինձ համար ընկեր սրտակից,
Տխուր է հոգիս, մաշում են ցաւեր,
Չկայ ինձ համար մի մարդ կարեկից։
Իղձեր ու իղձեր և միշտ երազներ,
Ինչ օգուտ իղուը յաւէտ երազել,
Իսկ լաւ օրերը անցնում են գնում,
Սիրել... բայց ում... ում տալ սիրտը ում,
Սէր ժամանակեայ չունի ոչ մի գին,
Իսկ յաւէտ սիրել է մեզ անհնարին,
Երբ քեզ ես նայում չկայ անցեալ՝ հետք,
Վիշտ, ուրախութիւն կորած են անհետ.
Ի՞նչ են կրքերը. չէ՞ որ վաղ թէ ուշ,
Իսպառ պիտ կորչին խելքի առաջին,
Եւ երբ սառնութեամբ է նայում կեանքին,
Տեսնում էք ծաղր ու կատարկութիւն։

*
* *

Դուրս եմ գալիս գէպ՝ ճանապարհ ես մենակ,
Մէգի միջից բարոտ ուղին է փայլում,
Խաղաղ գիշեր, մեղմիկ փայլում է լուսնակ,
Աստղ աստղի հետ մեղմ շշունջով լուռ խօսում։
Երկնքումը հիանալի տեսարան,
Իսկ ցածումը երկիրը ննջում մէջ կապտին.
Ինչու արդեօք վրդովւած է իմ հոգին,
Սպասում եմ։ Ցաւում եմ ես անցեալին։
Չեմ սպասում այլեւ կեանքից ոչ մի բան,
Իսկ անցեալին չարժէ ցաւել անպայման,
Ես փնտրում եմ ազատութիւն ու հանգիստ,
Եւ ուզում եմ ես մոռացել, բնել միշտ։
Բայց ոչ սառը մեռելային հիրհումով,
Կը ցանկայի յաւէտ քնել հոգի տակ,
Որ կրծքումս լինին այժեր կենսունակ,
Որ բարձրանար հանդարդ կուրծքս շնչելով։
Որ ամբողջ օր, ամբողջ գիշեր ինձ համար,
Սիրոյ մասին քաղցրիկ երգեր երգէին,
Որ իմ վերայ յաւէտ կանաչ մուխ կաղնին,
Կռանալով, հա, աղմկէր անդադար։

ՄԻ ՀԱՏՈՒԱԾ

«ՄԱՀՒԱՆ ՀՐԵՇՏԱԿ»-ԻՑ

ՆԱԽԱԲԱՆ

Ոսկի Արեւը։ Երկիր հրաշալեաց,
Երկիր դու սիրոյ և բուռն կրքի,
Ուր բացւում է վարդ՝ դուստր երկնքի,
Ուր բացի բախտից, ամբար է բարեաց,
Ուր թեթեւութեամբ սահում են ամպեր,
Աւելի վճիտ հոսում գետակներ,
Աւելի չքնաղ վերջալոյս վառւում.
Եւ դու Արեւը պահել ես խնամով,
Վառ գեղեցկութիւնն անցած օրերի,
Երբ մարդկանց հոգին ցանկութեամբ բախտի,
Չէր անւանարկւած չարի կնիքով։
Սիրում եմ ես քեզ, երկիրդ աննման,
Քեզ ճանաչողներ մոռացան, անպայման,
Իրանց սիրելի անուշ Հայրենիք,
Ով տեսել քո սիրուն գեղուհիք,
Չի կարող չյիշել ցոլք սիրուն աչաց,
Եւ կհաւատայ սիրով անկասկած,
Իմ այս տխրագին կարճ պատմւածքին։
Կայ մահու հրեշտակ. ահեղ բոպէին,
Երբ վերջին անգամ շնչում է հոգին,
Ամուր փարւում է մեր պարանոցին,
Բայց սառն են նորա մահաբեր ձեռներ,

Նրան տեսնելով՝ մթնում են աչեր,
Եւ անթիւ գոհեր դողում են, սարսում,
Երբ վերջին անգամ օդ են ներշնչում.
Բայց դարեր առաջ այս սև հանդիպում,
Չէր ձգում ահ, դող մարդկանց սրտերում,
Նա գիտէր անթիւ խորհրդաւոր խօսքեր,
Եւ ամոքում էր մարդկանց խոց սրտեր,
Հանգստացնում էր կրքեր երկրային,
Ունէր իրաւունք Բարձրից իր ձեռին,
Խաբել մի վայրկեան հիւանդի հոգին։
Ամեն տեղ փութով հասնում էր հրեշտակ,
Եւ ուր տեսնում էր տեղ բնակութեան,
Աչքում ցոլում էր նշան բարկութեան։
Նա միշտ գնում էր հանդարտ, անխռով,
Եւ որպէս աստղիկ՝ հանդարտ փայլերով,
Հրապուրում էր նա հոգիներին,
Տանում, հասցնում մինչ՝ դուռ դրախտին։
Բայց ինչու հիմա նորա հանդիպում,
Ազդում է միայն դող ու սարսռում։

ՀԱՅՆԷՒՑ

I.

ՄԱՅՐԻԿԻՍ

Զառացանքի մէջ հեռացայ քեզնից,
Ուզեցի ամբողջ աշխարհը շրջել,
Ուզեցի գտնել սէր գորովալից,
Եւ այդ վառ սիրոյն հոգով նվիրել։

Նրա յետեւից շատ թափառեցի,
Տխուր, յուսահատ շատ դուռ բաղխեցի,
Եւ սիրոյ փշրանք մուրաց իմ հոգին
Բայց ատելութիւն ծաղրով ինձ տւին։

Գնացի անվերջ սէր որոնելով,
Բայց և ոչ մի տեղ սէր չգտնելով,
Վերջապէս դարձայ դէպի մեր տնակ,
Տրտում յուսախար, դէմքով այլանդակ։

Դուրս եկար հանդէպ դու քո որդեակին,
Եւ պարզ ցոլացին քո աչքում միայն
Բոլոր այն սէրը, որը կաթոգին
Փնտրում էի ես անվերջ և ունայն։

X-ից

ՀԱՑ ՈՐԲԻ ԴԱՆԳԱՏԸ

(Գերմաներէնից)

Աղի արցունք դառնագին,
Են մշտական իմ բաժին,
Ուրախութիւն ինձ համար
Չէ վիճակւած լինել յար։

Ա՜խ, ինչպիսի սև ժամ էր,
Երբ քնահատ իմ աչեր,
Քաղցր բնից նոր բացւած,
Ճատ կրակներ տեսան վառւած։

Աղմուկ, շփոթ, վայնասուն,
Չէին խնայում ոչ մի տուն.
Ամենուրրք շողում էր,
Անգութ սուրը արնակեր։

Անօրինաց սրի ճարակ,
Եղաւ հայրս անճարակ,
Մօրս պատիւն անարատ
Պղծեցին նոքա ագատ։

Աղիզ բուրիկս ինձ նման,
Տարագրեցաւ անպաշտպան,
Փոքրիկ եղբայրս յաւիտեան,
Մտաւ սառը գերեզման։

Աղի արցունք վշտագին.
Են մշտական իմ բաժին,

Քարերիս մէջ մշտական,
Որոնում եմ ինձ կայան։

Հիւանդ, դժգոյն, նուազած,
Մնում եմ այստեղ միշտ քաղցած,
Քարերն են հանգստարանս
Եւ չոր խոտերն իմ ճարակս։

Ա՜խ, ոչ մի սիրտ ինձ համար,
Չի բաբախում ցաւագար,
Ա՜խ, ոչ մի աչք իմ վերայ,
Չէ, չի նայում, որ ողբայ։

Սակայն դու Տէր ողորմած,
Եւ դու Քրիստոս որբատած,
Ցոյց տուր մարդկանց իմ վիճակ,
Թէ հայ որբուկ շարունակ,

Հայրենիքից հեռացած.
Թափառում է մոլորած,
Ցուսալով օտարներից,
Իւր փրկութիւն յուսալից։

X-ից

ԱՂՔԱՏ ՄԱՅՐԸ

Քնիր, սիրուն իմ զաւակ,
Քաղցը քնով անուշակ,
Կերգեմ ցաւերս դժնդակ,
Օտարների դռան տակ։
Թափառելով գիւղէ գիւղ,
Կերգեմ անվերջ, աներկիւղ
Քեզ ձեռներիս օրելով,
Կասեմ ծր, ծր, իմ հոգեակ։

Տաքին, ցրտին անտրտունջ,
Պիտ գիմանանք անմռունչ,
Չունինք տուն տեղ. քաղց՝ դաժան
Մեր ընկերն է անբաժան...
Այնտեղ պառկինք,, ուր հասանք.
Թէկուզ կապոյտ երկնի տակ,
Քացը քնում մոռանանք,
Մեր ցաւերը դժնդակ։

Մութ է աշխարհ մեզ համար,
Չունինք օրեր մենք պայծառ,
Լալիս ես դու անդադար.
Չուզես երգս վշտահար...
Եւ ես քեզ հետ միասին,
Արտասուում եմ յալագին...
Քնիր զաւակ, իմ անգին,
Օ՜ր. ծր, կասեմ իմ բալին։

Աստված կուտայ, կմեծնաս.
Ծաղիկ կեանքիդ ես զուրբան,
Կճանաչես, իմ բալաս,
Մեր ցաւերը անսահման,
Աստուած բեզ հետ—չես մենակ,
Դռների տակ մոլորուած,
Զեռք եմ պարզում սովամած,
Օ՜ը, օ՜ը. օ՜ը օ՜ը իմ զաւակ։
Օրեր կուգան, իմ հրեշտակ,
Կլինես չարքաշ մի մշակ,
Ձես մոռանայ իմ անգին,
Հիւանդ մաշւած մայրիկին,
Ուրախ, սրտով գոհունակ,
Կապրեմ օրեր իմ վերջին
Կմտնեմ ցաւերս դժնդակ,
Օ՜ը օ՜ը կասեմ իմ բալին։
Կապրինք ուրախ, անարատ,
Տներս չէն, լիառատ,
Ոսկի արտերն, Աստուծով,
Մեզ կեանք կըտան ապահով,
Թոզ ես մաշւած տոպրակով,
Ընկնեմ անվերջ դռնէ դուռ,
Կանցնին ցաւեր, իմ մրմուռ,
Քնիր հոգիս, իմ օ՜ը օ՜ը...

ԳԱՐԲՈՒՆՈՎ—ՊԱՍԱԴՈՎԻՑ

Երջանիկ է նա, ով անվերջ սիրով,
Սիրում է բնութիւն մանկական հոգով,
Ում հարազատ է անբան անասուն,
Թէ մարդ, թէ գազան, ծաղիկներ սիրասուն։
Երջանիկ է նա ում սրտի խորքում.
Թէ վարդ, թէ զեռուն նման են սիրւում,
Ով դեռ չէ քամել արցունք յորդառատ,
Եւ ով չէ վօթել արիւն անարատ։
Երջանիկ է նա, ով վաղ հասակից
Թոյլին, ճնշածին դառել՝ կարեկից,
Որբին, թշւառին, անտուն ապրատին,
Զոհել է ինչքը, տուել իր հոգին։
Աշխարհը լցւած է մարդկանց վշտերով,
Լցւած՝ կենդանեաց պէս պէս տանջանքով,
Երջանիկ է նա, ում խոր սրտի մէջ,
Միշտ անկեղծ սէրը վառւում է անշէջ։
Երջանիկ է նա, ով փաղաքշանքով,
Համբին ու կաղին, անհետ կորածին.
Տալիս է հանգիստ, և վառը սրտով,
Հոգի ներշնչում թշւառ զրկւածին։
Երջանիկ է նա, ում ձայնն արդար,
Հնչում է յաւէտ ճնշեալի համար,
Մէգ ու խաւարից որպէս վառ փարոս,
Կանչում է դէպ՝ ինք սիրով յորդահոս։

X-ից

ԳԱՐՆԱՆ ԱՄՊ

Գարնան ամպերը կախուած բարձրունքից,
Ընձրև թափեցին, անձրև յորդալից,
Եւ ահա նրանց քամած արցունքից,
Դաշտ, սար ու անտառ ցնծան բերկրալից։

Ալ-զառ վարդերով լցւեց վարդենին,
Զուգւեց, պճնւեց կուրծքը մայր երկրին,
—Է՜յ գարնան ամպեր ի զուր չէք լալիս.
Ձեր արցունքները բարիք են տալիս։—

Ձեր արցունքները բարիք է երկրին,
Եւ երբ հասնում էք նրա բաց կրծքին,
Այնտեղ զարթնում է խոր քնած հատիկ,
Եւ ուրախ կեանքով ժպտում է մեղմիկ։

Բագուի Հայոց Հռիփսիմեան Դպր... Ենեդ.-ծխակ. (Օրիորդ...)
Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Публичная Библиотека
7/31 1922

ՄԵՐ ԱՋԽԱՏՈՒԹԵԱՄԲ

Հոյս են տեսել եւ վաճառում են

1. ՄԱՆԿԱԿԱՆ ԵՐԳԱՐԱՆ . . . . . 15 կ.
2. ԹԱԳՄԱՆԱԿԱՆ ՄԵՂԵԳԻՆԵՐ . . . 5 կ.

Պատրաստում է տպագրութեան

ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԵՐ (գրաւոր վարժութիւններ)

Դիմել՝ Александрополь учителю гор. нач. уч.
М. Тарахчіанъ.